

**Բանալի բառեր՝** Չինաստանի մոդել, մշակութային առանձնահատկություն, տնտեսության պետական կառավարում, ազգային զարգացման արտադրություն, չինական բարեփոխումներ, պետական կարգավորման հայեցակարգ, պետական կառավարում, ազգային անվտանգություն:

**ՅՏԴ 338.2**

## ՉԺՅ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ - ՊԵՏԱԿԱՆ ՇԱՐՇԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության թեմա՝  
**Տնտեսության պետական կառավարման առանձնահատկությունները (ՅՏԴ և ՉԺՅ օրինակներով)**

**Աննա ԶԱԼԻՆՅԱՆ**  
ՅՏԴ պետական կառավարման  
Ակադեմիայի հայցորդ

Գիտական ղեկավար՝  
**Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ**  
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Չինաստանում դեռևս հնագույն ժամանակներից տրվում և քննարկվում էր «ինչպե՞ս կառավարել պետությունը» հարցը և ներկայում էլ այն մնում է Չինաստանի պետական իշխանության և մասնագետների ուշադրության կենտրոնում: Այս հարցի պատասխանը և նպատակը մեկն է. հասկանալ, թե ինչպես կառուցել իդեալական պետություն:

Մթա առաջին դարում ձևավորվել էին Յին Չինաստանի հիմնական քաղաքական ուսմունքները՝ կոնֆուցիոսականությունը, մաոիզմը, լեգիզմը, դաոիզմը: Դրանք ունեին ոչ միայն փիլիսոփայական իմաստ, այլ նաև իրականացում էին կիրառական բնույթի աշխատանք. փնտրում էին մշտապես առաջացող հանրային կոնֆլիկտների հարթման ուղիներն ու միջոցները: Յենց այս հայեցակարգի սկզբունքներով էլ ձևավորվել էր իդեալական պետության հասկացությունը, որը պետք է ունենա ուժեղ գերագույն իշխանություն, հզոր բանակ և հանդիսանա խիստ կենտրոնացված պետություն<sup>1</sup>: Միաժամանակ այդ ուսմունքները մատնանշում էին արդյունավետ պետության բարդացուցիչ տարրերը, մասնավորապես.

- պետության ներսում միասնություն ապահովելու համար անհրաժեշտ է վերացնել վնասակար և «շեղող» ուսմունքները,
- հասարակության մեջ պետք է խրախուսել մատնությունը՝ թեկուզ և ամենամտերիմների հանդեպ՝ դրանով բոլորին պահելով պատժի անխուսափելիության մթնոլորտում,
- բացառել պետական պաշտոնների նշանակումը ազգակցական կապի հիման վրա,
- պետական ծառայության ընդունել առավել իմաստուն մարդկանց՝ անկախ նրանց ծագումից, ժողովուրդը պետք է լինի կուշտ և այլն<sup>2</sup>:

Վերլուծելով Չինաստանի քաղաքական և իրավական մտքի չորս հիմնական ոլորտները, կարող ենք անել որոշ եզրահանգումներ.

1. Չնայած Եական տարբերություններին, Չինաստանի բոլոր ուսմունքների ընդհանուր նպատակը հանդիսացել է իդեալական պետության հայեցակարգի մշակումը, որտեղ գերակայում են կարգը և ներդաշնակությունը:

Եթե դատի՞վ համար իդեալական պետությունը տնտեսապես հարուստ պետությունն է, որի վճարունակությունը թույլ է տալիս ապահովել ենթակառուցվածքի զույգային պահանջները, ապա մաոիզմի ուսմունքի համաձայն՝ դա պետություն է առանց թագավորի, առանց ենթակաների, առանց դասերի:

Կոնֆուցիոսականության համար իդեալական է միասնական պետությունը, որտեղ տիրում է յուրաքանչյուրի հանդեպ հոգատարությունը, որտեղ բոլորը ապրում են որպես մեկ ընտանիքի անդամներ: Որտեղ բոլոր ապրանքները հասանելի են բոլորին և բաշխվում են ըստ անհրաժեշտության:

Լեգիզմում բարձրագույն արժեք է ներկայացնում թագավորի իշխանությունը և ողջ համակարգը աշխատում է իշխանության ամրապնդման համար, որտեղ պետության ղեկավարը պետք է արտակարգ տիրապետի կառավարման արվեստին, անձամբ խստագույնս հետևի օրենքների պահանջների պահպանմանը:

2. Պետության կառավարման բարոյականության իմաստն ու տեղը որոշելու հարցում Կոնֆուցիոսը գտնում էր, որ մարդիկ իրենց էությունը մոտ լինելով միմյանց, յուրաքանչյուրը պետք է մշտապես կատարելագործվի, ձգտի որոշակի կատարյալ կերպարի:

Լեգիզմը ընդհակառակը, գտնում էր, որ մարդիկ իրենց բնույթով եսասեր են և նրանք կարող են արձագանքել միայն պատժին կամ պարգևին: Յետևաբար, արդյունավետ կառավարումը պահանջում է օրենքների, իշխանության հեղինակականության և ղեկավարման արվեստի առկայությունը, ինչից էլ հետևում է, որ և պետական մարմինները և վարքի բոլոր օրենսդրորեն սահմանված չափանիշները ավելորդ են: Այսպիսով, մարդու էության հասկացությունից կախված, որոշվում է պետության կառավարման բովանդակությունը<sup>3</sup>:

<sup>1</sup> Stu՝ Лан Минь Янь. Теория государственного управления. Вестник Омского университета. Серия «Право». 2012. № 1 (30). С. 26–30:

<sup>2</sup> История Древнего мира. Древний Восток. Индия, Китай, страны Юго-Восточной Азии / А. Н. Бадак, И. Е. Войнич, Н. М. Волчек и др. – Минск: Харвест, М.: АСТ, 2000

<sup>3</sup> Конфуцианство имеет мировое значение. Электронный ресурс. –<http://ent.sina.com.cn/x/2006-09-07/14571235897.html>.

3. Պետական կառավարման մեխանիզմը սահմանվում էր երկու կերպ՝ «որն է գերադասելի՝ ակտիվ գործունեությունը, թե անգործությունը»: Արժեք արդյոք իշխանությունը ակտիվորեն մասնակցի հասարակական կարգի ստեղծմանը, թե ոչ: Կոնֆուցիոսականությունը և լեգիզմը կողմնակից են եղել ակտիվ գործունեությանը: Մտիզմը և դաոիզմը, ընդհակառակը, պաշտպանել են անգործությունը և գտնում էին, որ «մեծ պետության կառավարումը ձուլ տապակելու նման մի բան է, երբ չի կարելի անընդհատ շրջել ձուլը, պետք է ժողովրդին հանգիստ թողնել»<sup>4</sup>:

4. Կենտրոնական տեղում գտնվում էր «պետության կառավարման ամենակարևոր տարրը՝ մարդն է թե ռեժիմը» հարցադրումը: Կոնֆուցիոսականությունը համարում էր, որ գլխավոր դերը կատարում է մարդը, լեգիզմն ապացուցում էր լավ ռեժիմի ստեղծման անհրաժեշտությունը, որը նույնականացվում է ճիշտ օրենքների հետ: Մտիզմը և դաոիզմը պնդում են, որ մարդիկ պետք է վերադառնան իրենց բնածին էությանը, այդ իսկ պատճառով իդեալական պետության համար պահանջվում են քիչ օրենքներ կամ դրանք ընդհանրապես պետք չեն:

Կոնֆուցիոսականության վերանայված հայեցակարգը մինչ օրս ձևավորում է Չինաստանի ընդհանուր և քաղաքական մշակույթը, մտնում է Զեռավոր Արևելքի կոնֆուցիոսական քաղաքակրթության մշակութային մատրիցայի անբաժանելի մասը: Ուսումնաբերության կարևորագույն սկզբունքը՝ «կարևորը մարդն է, իսկ օրենքը գործում է որպես իրավական կարգավորման օժանդակ գործիք» մինչ օրս ներգործում է ԶԺԿ-ի պետական կառավարման մշակույթի վրա<sup>5</sup>:

1978 թ.-ից հետո, հիմնվելով արևմտյան փորձի վրա Չինաստանում սկսեցին կառուցել իրավական պետություն, սակայն չիրաժարվելով ավանդույթների ռեսուրսներից՝ սոցիալիստական իրավական պետություն չինական հատկանիշներով: Իրավական պետության ընդհանուր սկզբունքները լրացվում են խիստ չինական հատկանիշներով, մասնավորապես<sup>6</sup>:

1. Չինական իրավական պետության ստեղծման համար պետք է ուշադրություն դարձնել հոգևոր պայմանների զարգացման վրա, հիմնվել բարոյականության վրա:

2. Իրավական պետությունում պետք է գոյություն ունենան կարգը և ներդաշնակությունը (ներդաշնակությունը ընտանիքում, հասարակության մեջ և երկրում): Յուրաքանչյուրը պետք է ունենա կյանքի արժանավայել պայմաններ, արդար աշխատանքի դեպքում՝ հարուստ լինելու հնարավորություն:

Չինաստանի պետական կառավարման փորձը ապացուցում է, որ բացարձակապես սին են այն պնդումները, թե տնտեսության պետական կառավարման բարեփոխումներն անխուսափելիորեն ստեղծում են ներդրումների անկման, երկրի սոցիալ-տնտեսական ցուցանիշների ընդհանուր վատթարացման վիճակ: Ընդհակառակը, տնտեսության պետական կառավարման ճիշտ և մտածված բարեփոխումների աստիճանական իրականացումը թույլ է տալիս հասնել դրական արդյունքների:

Պետք է նկատել, որ եթե Զայաստանի Զանրապետությունում (և ընդհանրապես՝ Նախկին Խորհրդային Միության գրեթե բոլոր երկրներում) անկախության հռչակումից հետո տնտեսության և ընդհանրապես՝ պետական կառավարման ողջ համակարգի մասնակի բարեփոխումների նպատակը առաջին փուլում հին համակարգի կազմաքանդումն էր, ապա Չինաստանի Ժողովրդական Զանրապետությունում Չինական բարեփոխումների նպատակը հանրային հատվածի և պետական կարգավորման առաջատար դերի պայմաններում բազմակարգությամբ համակարգի ստեղծումն էր՝ առանց կազմաքանդելու պետական կառավարման ավանդական սկզբունքները: Չինաստանում բարեփոխումների այդ ռազմավարությունը մտել է պատմության մեջ «սոցիալիստական շուկայական տնտեսություն» կամ «սոցիալիզմ չինական առանձնահատկությամբ» տերմինով<sup>7</sup>:

Չինական տնտեսական մոդելը ապացուցեց, որ միայն ազատ ձեռնարկատիրությունը չի կարող դառնալ երկրի տնտեսական հաջողության հիմքը: Գործնականում ԶԺԿ տնտեսության զարգացման գործում պետության աճող ազդեցությունը հանգեցրեց երկրի հզոր զարգացմանը: **Ըստ էության, Չինաստանի ստեղծած քաղաքական մոդելն իրենից ներկայացնում է աշխարհում դեռ միակը հանդիսացող տնտեսական ազատականությունը սոցիալիստական վարչարարությամբ:**

Չինական բարեփոխումների ճարտարապետ Դեն Սյաօպինը ընդգծելով ազգային պետական շահերի գերակայությունը գաղափարախոսական կանխադրույթների նկատմամբ միշտ էլ հայտարարել է իր «Նախ չինացի լինելը, իսկ ապա՝ նոր՝ կոմունիստ»։ «...մենք պետք է ուսումնասիրենք զարգացած կապիտալիստական երկրների գիտության, տեխնիկայի և տեխնոլոգիայի նվաճումները, սովորենք նրանցից տնտեսական կառավարում: Սակայն այն ամենը, ինչը վերաբերվում է հոգևոր մշակույթին, անհրաժեշտ է ինչպես գաղափարական բովանդակության, այնպես էլ արտահայտման միջոցների իմաստով ենթարկել մարքսիստական վերլուծության, գնահատման ու քննադատության»<sup>8</sup>: Զենց վերը նշված մտեցումների արդյունքում է, որ «ԶԺԿ զարգացման գործընթացը իր մեջ ներառեց մի շարք փուլեր՝ արևմտյան մշակույթի ներթափանցումը, դրա հետագա չինականացումը և այդ բաղադրիչների սինթեզը»<sup>9</sup>:

Առանց ուսումնասիրելու Չինական «մտքի թռիչքը», գաղափարական ու մշակութային առանձնահատկությունները, փորձել հասկանալ տնտեսության պետական կառավարման չինական առանձնահատկություններն ու հաջողություններն պատճառները, կշանակի ի սկզբանե մեզ տանենք փակուղի:

Չինացիները մշտապես դեմ են եղել «շուկային թերապիային»: Չինաստանի համար գլխավոր 3 սկզբունքները՝ սոցիալական կայունությունը, զարգացումը և բարեփոխումը մշտապես առկա են իրենց պետական կառավարման հայեցակարգերում: Անգամ թվարկման հերթականությունը ցույց է տալիս դրանց հստակ ուղղվածությունը. «Նախ կայունությունն է՝ որպես կարևորագույն նախադրյալ, այնուհետև՝ զարգացումը՝ որպես հիմք, և ապա, բարեփոխումը, որի հաջողությունը կանխորոշված է երկու նախորդող գործոններով»<sup>10</sup>:

Չինական ազգային ավանդույթը հանդիսանում է նրա ամուր մշակութային հիմքը, ինչը զարգացել է ավանդական հին մշակույթի և դրա տարբեր ուղղությունների առանձնահատկությունների հիմքի վրա: Չինաստանի զարգացման պատմամշակութային առաջնությունները հանդիսանում են ժողովրդին միասնական դարձնող, սերունդների հաջորդականությունը ամրացնող ներքին կապերի համախմբություն: Չինական քաղաքակրթության յուրահատկությունը՝

<sup>4</sup> Всеобщая история менеджмента / Под общей редакцией д.т.н., проф. И.И. Мазура и д.т.н., проф. В.Д. Шапиро – М.: Издательский центр ЕЛИМА, 2006. - 888 с.

<sup>5</sup> Восточная философия/ Томпсон М., пер.с англ. Ю. Бондарева. - М.: ФИАР-ПРЕСС, 2000. <http://www.km.ru/referats/F346B91F622540D194D357E25AB67F15>

<sup>6</sup> Лан Минь Янь. Теория государственного управления. Вестник Омского университета. Серия «Право». 2012. № 1 (30). С. 26–30

<sup>7</sup> Stu`Центр проблемного анализа и государственно-управленческого проектирования. Сравнительный анализ государственного управления переходными социально-экономическими системами: Россия-Китай. **Материалы постоянно действующего научного семинара**. Вып. 7(37). – М.: Научный эксперт, 2010. – 136 с.-էջ 17

<sup>8</sup> Романюк В. Прыжок дракона. Как вести бизнес с китайцами. М.: Известия, 2005. С. 137.

<sup>9</sup> Якунин В.И., Багдасарян В.Э., Куликов В.И., Сулакишин С.С. Вариативность и цикличность глобального социального развития человечества. Монография. М.: Научный эксперт, 2009. 464 с.; Китай: универсальная модель модернизации // МЭИМО, 2009, № 7, 8.

<sup>10</sup> Stu` Чжан Юй. Содержание и значение китайской модели // Экономические науки, Пекин, 2008, № 11. С. 28–29

հնագույնը ներկա իրականության հետ կապող, ապագա սերունդների համար անցյալի գծերը պահպանող, անցյալի միջով ապագային նայող շինական մտածողության հատուկ տեսակի մեջ է Չինացիները «գնում են առաջ», չբանդելով հինը, գնում են առաջ՝ հետ նայելով», շարժվում են «մինչև բանդելը՝ ստեղծիր» սկզբունքով<sup>11</sup> :

Չինացիները չգնացին կենտրոնացված կառավարման ապամոնոստիան ուղիով, այլ պահպանելով նախկին համակարգը, այն աստիճանաբար հագեցրին ու հարստացրին նոր տարրերով:

Չինացիների համար խնդիրը ոչ թե տնտեսական մոդելի ընդունման, այլ այնպիսի մոդելների համադրության ընտրության մեջ է, որը առավել ընդունելի կլինի այս կամ այն պետության պայմաններում:

**Ազգային գաղափարը, գաղափարախոսությունը** շինական բարեփոխումների ռազմավարական տեսլականի կարևորագույն և, կարելի է ասել Չինաստանի գոյության ողջ ընթացքի անբաժանելի բաղադրիչն է:

«Մեծ Չինաստանի» վերածննդի գաղափարը ընդհանուր տեսքով ձևակերպեց Չինաստանը հզոր և ծաղկող տերության վերածելու նպատակը, որը դարձավ իսկական համազգային համախմբող գաղափար և հետագայում կոնկրետացվեց ծրագրերում: Իրականացումը բաժանվում է երեք փուլի, որի ամբողջությամբ ավարտը նախատեսվում է XXI դարի կեսերին:

Չինաստանում տնտեսական բարեփոխումների հաջողությունն ապահովող կարևորագույն գործոնը **հետևողական սոցիալական կողմնորոշվածությունն է և այն հանգամանքը, որ** բարեփոխման օգտակարությունը իր վրա անձամբ պետք է զգա յուրաքանչյուր շինացի, ինչը և նրան կդարձնի բարեփոխումների ակտիվ կողմակից:

Պետական հատվածում, ուսումնասիրելով ՉՃՀ-ի տարբեր ոլորտներում վարվող բաղաբալկանության հիմնական մոտեցումները, հստակ է, որ պետական հատվածը կա և կմնա որպես ժողովրդական տնտեսության նկատմամբ պետության վերահսկողության գլխավոր գործիչ և կգերիշխի տնտեսության այնպիսի ճյուղերում, որոնք վերաբերում են ազգային անվտանգությանը, բնական մենաշնորհներ հանդիսացող արդյունաբերության և ծառայությունների ճյուղերին, երկիրը հիմնական մթերքներով ու ծառայություններով ապահովող ճյուղերին, բարձր տեխնոլոգիաների և առաջադեմ արտադրանքի զարգացումը որոշող ճյուղերին:

2005 թվականից ՉՃՀ պաշտոնական **զարգացման գիտական հայեցակարգի**<sup>12</sup> առանցքային գաղափարը տնտեսական աճի բանական կարամետրերից հրաժարումն է: Խնդիր է դրվել **մոդելը դարձնել ներդրումային և ռեսուրսախնայող՝ սոցիալական կողմնորոշվածությամբ**: Նախանշվել է 2020 թվականին ստեղծել «բաղաբի և գյուղի միասնական ազատ տնտեսական գոտի (ԱՏԳ), ավարտին հասցնել «գյուղի նոր տեսակի» ստեղծումը, ձևավորել երկրի միասնական տնտեսական համալիրի տրանսպորտային և էներգետիկ ենթակառուցվածք»<sup>13</sup> :

Չետամսաց շրջանների զարգացման նպատակով Չինաստանի կառավարությունը մշակեց այդ շրջաններում ազատ տնտեսական գոտիների ստեղծման ծրագիրը: Սկզբում ստեղծվեցին չորս հատուկ տնտեսական գոտիներ՝ ՇԷՆՉԷՆ, Չժուհայ, Շանտոու, Սյամեն: Բարեփոխումների առաջին փուլում Չինաստանը օտարերկրյա ներդրողներին տրամադրում էր հարկային արտոնություններ, էժան հող, իսկ պետական միջոցներով ստեղծում էր անհրաժեշտ ենթակառուցվածք: Նախնական փուլում օտարերկրյա ներդրողների պետությունը պարտադրում էր, որպեսզի նրանք վերցնեն շինացի գործընկերներ: Օտարերկրյա ներդրողները կարող էին ազատ արտահանել իրենց արտադրանքը, սակայն, տեղական արտադրողին պաշտպանելու համար, ներքին շուկայում իրենց կողմից արտադրվող արտադրանքի վաճառքի ծավալները սահմանափակվում էին պետության կողմից:

Արտաքին առևտրի զարգացման մյուս կարևոր խթանը արտադրության միջազգայնացման համար դարձավ Չինաստանի 14 «բաց բաղաբների» ձևավորումը, որտեղ տեղաբաշխվեցին տեխնոլոգիաներ, օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ մշակվեցին նորագույն տեխնոլոգիաներ: Գործնականում «բաց բաղաբները» կարելի է անվանել տնտեսական և տեխնոլոգիական զարգացման համալիր գոտիներ:

Չետագայում, օտարերկրյա ներդրումներ, տեխնոլոգիաներ և կադրեր ներգրավելու համար, ՉՃՀ-ում ստեղծվեցին «բարձր տեխնոլոգիաների գոտիներ», որտեղ օտարերկրյա ներդրողներին առաջարկվում են անվճար հողատարածքներ ու հարկերից ազատում: Այս մեթոդները կիրառվում էին **տարածքային զարգացման պետական կարգավորման իմաստավորված հայեցակարգի պայմաններում**:

Չինաստանի բարձր տեխնոլոգիաների, կրթության ու գիտության զարգացման բնագավառում իրականացված բարեփոխումները պայմանականորեն բաժանվում է փուլերի, մասնավորապես, 1978-1984թթ., 1985-1986թթ., 1987-1992թթ., 1992-2001թթ. և սկսած 2001թ. մինչև ներկա ժամանակները, որը անվանում են առաջանցիկ զարգացման փուլ<sup>14</sup>:

**Առաջին փուլում** կրթության ոլորտում տեղի էր ունենում բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների մասնագիտական գործունեության վերականգնում, գիտության նյութատեխնիկական բազայի վերականգնում, ստեղծվում էին հատուկ տնտեսական գոտիներ (ՉՏԳ):

**Երկրորդ փուլը** բնութագրվում էր գիտության և տեխնիկայի կառավարման համակարգի փոփոխմամբ՝ ուղղված արագ զարգացող շուկայական հարաբերություններին հարմարվելուն:

**Երրորդ փուլում** հիմնական ուշադրությունը դարձվում էր ակադեմիական ինստիտուտների, բուհերի և ձեռնարկությունների միջև սերտ փոխկապակցվածության հաստատմանը: Տվյալ ծրագրերի սկզբունքային հատկանիշը դարձավ կենտրոնացված պլանավորումից, հետազոտությունների պետական ֆինանսավորումից հետ կանգնելն ի օգուտ շուկայական խթանների և մշակումների: Մեծ ուշադրություն էր դարձվում տեղական մակարդակով արդյունաբերական և ենթակառուցվածքային խնդիրների լուծմանն ու դրանց ուղղվածությանը:

**Չորրորդ փուլը** նշանավորվեց «արտաքին աշխարհի համար բաց լինելու» բաղաբալկանության շնորհիվ երկրի տնտեսությունում օտարերկրյա ներդրումների, առաջատար տեխնոլոգիաների զանգվածային ներգրավմամբ:

**2001 թվականին սկիզբ առած՝ 2002-2020թ.թ. ընդգրկող հինգերորդ փուլում** նախատեսված է որակյալ թռիչք՝ բարձր տեխնոլոգիաների զարգացման մեջ անցում մասնակցելուց դեպի ինքնուրույն նորարարության:

Չինաստանի արագ զարգացող տնտեսությունը բարձր որակավորում ունեցող մասնագետներով ապահովելու համար պետությունը հարյուր հազարավոր երիտասարդների է ուղարկում լավագույն արտասահմանյան համալսարաններ: Միաժամանակ Չինաստանի ղեկավարությունը անում է ամեն ինչ այս բաղաբալկանության հնարավոր բացասական միտումը՝ «ուղեղների արտահոսքը» մեղմելու համար: Ինչպես շինացի, այնպես էլ օտարերկրյա հետազոտողներին, ովքեր աշխատում են Չինաստանում, թույլ է տրվել ազատ մեկնել երկրից և վերադառնալ: Արտասահմանից վերադարձած գիտնականների 4 տարի ժամկետով տրամադրվում են հետազոտական դրամաշնորհներ մինչև 1 մլն յուան գումարի չափով (մոտ 76 մլն դրամ

<sup>11</sup> Stu' Drucker P.F. Management: Tasks, Responsibilities, Practices. N.-Y, 2001

<sup>12</sup> Stu' Мозиас П. Идеология экономической реформ в Китае: основные этапы эволюции // МЭМО. 2007, № 11. С. 67

<sup>13</sup> Stu' Абалкин Л. Аграрная трагедия России // Вопросы экономики, 2009, № 9

<sup>14</sup> Stu' Михеев В. Китай: опыт стратегии «сфокусированного» развития // Институт Дальнего Востока РАН // <http://www.rusrev.org/content/review/default.asp?shmod>

09.03.2018թ.-ի դրությամբ) տեխնոպարկերի և բիզնես-ինկուբատորների ստեղծման նպատակով: Իրականացվել են առանձնահատուկ շնորհ ունեցող հայրենակիցներին երկիր ներգրավելու հատուկ ծրագրեր և այլն<sup>15</sup>:

Չինաստանում պետական կառավարման տեսակը ունի ազգային և ազգային շահերի կողմնորոշում, այն պլանավորող և զարգացումը նախագծող է, սուվերեն է՝ արտաքին միջավայրի պայմաններից անկախ կամ ունի թույլ կախվածություն:

Իսկ ի՞նչ է նշանակում սուվերեն պետական կառավարում կամ ոչ սուվերեն պետական կառավարում: Օրինակ, Չինաստանում առաջացավ նոր հայտնաբերված տնտեսա-քաղաքական եզրույթ՝ քաղաքական վարկավորում: Վարկավորումը կարող է լինել առևտրային, երբ ֆինանսական ռեսուրսները տեղաբաշխվում են տոկոսի, ռենտայի հաշվին վաստակելու նպատակով, այն մի տեսակ վաշխառուական մեխանիզմ է: Սակայն, գոյություն ունի վարկավորում, որը որպես նպատակ չի դնում ֆինանսական զանգվածի առևտրային աճը, այլ որպես նպատակ սահմանում է կառավարվող համակարգում զարգացման համամասնությունները: Խոսքը զարգացման գործում սոցիալական ակտիվության բարձրացման մասին է, երբ վարկավորումը մուլտիպլիկատորի էֆեկտի հաշվին ավելացնում է ոչ այնքան տնտեսական, այլ սոցիալ-տնտեսական արդյունավետությունը:

Չինաստանը, համաձայն անցումային հայեցակարգի զարգացել է ամվել Էվոյուցիոն (աստիճանական) կերպով, առանց շուկային թերապիայի, պահպանելով քաղաքական և սոցիալական կայունությունը: Տարբերությունը կարծես թե դրա մեթոդների ու տեմպերի մեջ է<sup>16</sup>: Բարեփոխումներն իրականացվում են այսօր գործնականում բոլոր երկրներում, Չինաստանում դրանք սկզբունքորեն չեն փոփոխում նախկինում գոյություն ունեցող հիմքը, պարադիգմային բնույթ չեն կրում:

Չինաստանի ձեռքբերումները որոշվում են հենց նրանով, որ այն չի փոխել իր Եուլյունը և նա հավատարիմ է մնացել իր պատմական պարադիգմային (հարացույցին): Չինաստանի համար սկզբունքային կարևորություն ունի իրավահաջորդությունը, ազգային սովորույթը:

Տավոբ, ներկա պատմական ժամանակահատվածում, մեր կարծիքով Հայաստանի Հանրապետությունում կարծես թույլ է զարգացած «ազգային դեմք»-ի հասկացությունը, իսկ անցյալի քարկոծումը դարձել է ազգային ավանդույթ: Նայելով ժամանակակից աշխարհի այլ աշխարհաքաղաքական նշանակալի դեպքերին, կտեսնենք նրանց բոլորի հավատարմությունը իրենց պատմական պարադիգմային: Մուսուլմանական արևելքի ժամանակակից երկրները համապատասխանում են պետականության իսլամական մոդելին, Ճապոնիան՝ սինտոականին, Հնդկաստանը՝ հինդուիստականին: Համապատասխան իրավահաջորդություն նկատվում է նաև Արևմուտքում: Եվրոպական սոցիալական ժողովրդավարությունը ընկալելի չի լինի առանց յուրօրինակ ավանդույթի վերլուծության: Ամերիկային չենք հասկանա առանց կալվինիզմի ավանդույթի: ՀՀ-ն հռչակում ու իրականացնում է անցումայինի գաղափարախոսությունը և դրա համար էլ պետք է խոսել ոչ թե անցման մոդելների տարբերությունների, այլ այն մասին, որ ՀՀ-ում և ՉՀ-ում իրականացվող բարեփոխումների նպատակները եղել են սկզբունքորեն տարբեր:

Մեզ մոտ անցումայինի պատմաի տակ իրականացվել է նախկին պետականության քանդում և, ըստ Եուլյան, ներկայումս պետությունը գործում է բացառապես նախկին համակարգի խորհրդային ժամանակներից մնացած ենթակառուցվածքների վրա: Փաստորեն, Չինաստանի և ժամանակակից Հայաստանի տարբերությունները նախ՝ նպատակադրության տարբերությունն է: Հայաստանը այսօր կառուցում է «նոր եվրոպական-ամերիկյան մոդելի պետություն», Չինաստանը, ինչպես կառուցել, այնպես էլ շարունակում է կառուցել քաղաքակրթորեն **ինքնություն ունեցող չինական մոդել**:

Ինչու՞մ է այստեղ չինական յուրահատկությունը: Մեծ հաշվով չինացիները շահել են մի բան: Դա ազգային կողմնորոշում ունեցող էլիտան է, որը դաստիարակված է քաղաքակրթության հարատև զարգացման վրա: Չինական «համբերելը» դա ոչ միայն ամսեկան ցածր աշխատավարձով աշխատելն է, այլ նաև ճիշտ պահին սպասելն է, համախմբվելն է, ազգային կողմնորոշում ունեցող քաղաքականության վարումը, համակարգային լուծումներ պահանջող հարցերում «դանդաղ շտապելն է», ինչը, կարծում ենք, շատ մեծ առավելություն է:

Այսպիսով, շնորհիվ Չինաստանի տնտեսության պետական կառավարման սկզբունքների ու ազգային-պետական շահերի ներդաշնակեցման և շուկայական մոտեցումների հավասարակշռվածության ապահովման մոտեցումների, հայկական միջավայրի առանձնահատկությունների հաշվառմամբ, դրանց կիրառումը կարող է ավելի ծանրակշիռ ու նշանակալի դարձնել ՀՀ-ի դիրքերը, քան այսօր ունենք համաաշխարհային ինստիտուցիոնալ համակարգում: Արդյունքում՝ Հայաստանի Հանրապետությունը ձեռք կբերի տնտեսության պետական կառավարման ինստիտուցիոնալ կայունություն, կկարողանա ապահովել տնտեսական աճի բարձր տեմպեր և դրանից հետևող բնակչության ավելի բարձր կենսամակարդակ:

*Ներկայացվել է 06.02.2018թ.  
Ընդունվել է տպագրության 28.02.2018թ.*

<sup>15</sup> Инновационный Китай // Экономическое обозрение // <[http://www.review.uz/page/article/tendencies\\_of\\_development/2279/](http://www.review.uz/page/article/tendencies_of_development/2279/)>.

<sup>16</sup> Крылов Д. Китайская модернизация: говорить и делать // РФ сегодня. 2010, № 5